ՈՐՈՇՈՒՄ թիվ 1-6
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 25 օգոստոսի 2006 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ Ռ. Պապայանի
Անդամակցությամբ Վ. Հովհաննիսյանի
Զ. Ղուկասյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Հրանուշ Դավթյանի 2006 թ. օգոստոսի 21-ին ՀՀ Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը քննության ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Քաղ. Հրանուշ Դավթյանը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան, վիճարկելով «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի պահանջներին: Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Հրանուշ Դավթյանը միջնորդել է իրեն ազատել պետական տուրքի վճարումից: Միջնորդությունը բավարարման ենթակա է, քանի որ դիմողը կենսաթոշակառու է եւ եկամուտի այլ աղբյուր չունի:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Հրանուշ Դավթյանի դիմումը «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու վերաբերյալ, ընդունել քննության, կազմել գործ, պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

Հրանուշ Դավթյանին ազատել պետական տուրքի վճարումից:

Նկատի ունենալով, որ նույն հարցի՝ Սոցիալական քարտերի մասին ՀՀ օրենքի 11 հոդվածի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունել նաեւ քաղ. Մանուշակ Քոչարյանի դիմումը, առաջարկել միավորել այս երկու գործերը եւ քննել նույն նիստում:

Նախագահող՝
Անդամներ՝